Ո՞ՒՐ ԵՆ ՆՐԱՆՔ

Արցախցիները շատ են ուզում իմանալ, թե երկու տարի առաջ ո՞ւր հեռացան իրենց փախստական հայրենակիցները եւ ինչ են մտածում Արցախի մասին: Փոստային եւ հեռախոսային կապի բացակայության պատճառով նրանք տեղեկություններ չունեին իրենց որդիների, դուստրերի, հարազատների մասին: Վերջերս Ռուսաստանից եկողները իրենց հետ բերում են նաեւ արցախցիների նամակները՝ հաստեագրված հայկական ռադիոյի «Արաքս» գործակալությանը: Պարզվում է, որ սփյուռքահայության համար ստեղծված ռադիոգործակալության սպասարկման գոտուն ավելացել է նաեւ այսպես կոչված «Մերձավոր արտասահմանը» կամ «Ներքին սփյուռքը», ուր հայտնվել են հազարավոր արցախցիներ: Նամակները համակված են հայրենիքի կարոտով ու վերադարձի սպասումով: Բոնագաղթի ալիքները նրանց նետել են օտար ափեր, բայց նրանք հույս են փայփայում, որ փոթորիկներին ու մակընթացությանը կհաջորդի տեղատվությունը, եւ զանգվածաբար կբռնեն տունդարձի ճանապարհը: Շատերը զոջում են, որ Մարտակերտի շրջանի գյուղերը բռնագրավելուց հետո իրենք ապաստանեցին ոչ թե Ղարաբաղի այլ վայրերում կամ Հայաստանում, այլ չվեցին, ինչպես իրենք են գրում, «տաք երկրներ», ուր հեշտ է ապրելը: Ռադիոյով լսելով իրենց հայրենակիցների քաջագործությունների մասին, հպարտանում են, վշտանում տված զոհերի համար, ու նաեւ շիկնում ամոթի զգացումից, որ իրենք նրանց հետ չեն, որ ազատել են իրենց գլուխը, հարազատներին մենակ թողնելով ադրբեջանական զավթիչների դեմ պատերազմում:

Սիա, թե ինչ է գրում այդ նամակների հեղինակներից մեկը: «Խնդրում եմ հրապարակելու ժամանակ միայն ազգանունս հայտնեք: Ինձ շատ վատ եմ զգում, որ հեռու եմ հայրենիքից՝ ոչ մշտական, բայց միեւնույն է՝ վատ է Մակյան»: Ծրարն ուղարկել է անծանոթի միջոցով: Ընդարձակ է նամակը, այն պարունակում է պատմություններ փախստականների, նրանց ապրումների ու կարոտաբաղձության մասին: «Պատահում է, որ հավաքվում ենք վտարանդի արցախցիներս ու երանելի պահեր հիշում հայրենիքից,- գրում է Մակյանը: -Ամռանն ու աշնանը քեֆեր էինք անում գյուղի հանդերում, սառնորակ աղբյուրների մոտ: Բաժակաճառերում քնադատում էինք նրանց, ովքեր լքում էին հարազատ ու գեղեցիկ լեռնաշխարհը, գնում Բաքու, Սումգայիթ, Մինգեչաուր ու մոռանում մայրենին: Պարսավանքի խոնքեր էինք ասում նաեւ այն ականավոր մարդկանց հասցեին, ովքեր այլափոխել են իրենց հայկական ազգանունները ու դարձել Մուրադելի, Թարիվերդիեւ, Թուխմանով, Մարաջեւ, Կիրկորով եւ այլն:

-«Հայրենի աղբյուրները կանգրում է Մակյանը,- բայց դրանցից քչերն են գետերին հասնում, տեղերում եւ անմշակ հողերում կամաքում են: Պետք է փխրել եւ ուրախանալ մայր ժողովրդի հետ, ժողովրդի ձեւով: Այսպես բաժակաճառեր էինք ասում, ապա փիրում էր լռություն, միայն անտառից խշշոց էր լսվում ու հավքերի ձայն, ու մեկ էլ աղբյուրն էր իր հավերժական երգը երգում»:

Հայրենի հանդերում աղբյուրները հիմա էլ շարունակում են երգել, միայն այդ երգը լսողներն են պակասել: Զոհվածները չէ, որ պակասել են, նրանք ձուլվել են հայրենի աղբյուրների հավերժական երգին: դուք եք պակասել՝ անհայտ ու անհասցե: Հիմա էլ ձեր մասին են խոսում այնպես, ինչպես դուք էիք պարսավում հայրենիքը լքողներին: Ճիշտ է, հիմա քեֆեր չեն լինում, բայց դարձյալ հավաքվում են: Նշում են զոհվածների քառասունքը, տարին, նրանց ծննդյան օրերը, նաեւ հարսանիքներ են լինում եւ այդ ժամանակ զրույց է բացվում նաեւ ձեր մասին: Նրանք ձեզ մոլորվածներ են համարում, ձեր բարին են հիշում, չէ, որ դուք նրանց մանկության ընկերներն եք, նրանց եղբայրը, քույրը, հարազատը: Նրանք ներողամիտ են եւ կարոտով սպասում են ձեզ:

Պարոն Մակյան, նամակում չեք նշել ձեր ծննդավայրի անունը, բայց այստեղ գիտենք, որ Արցախում Մակյան ազգանուններ կրողները հիմնականում հաթերքցի են: Եթե դուք էլ Հաթեքից եք, լավ կհիշեք վաթսուն տարվա ուսուցիչ Մակիչ Մակյանին: Հավանաբար դուք նրա ազգականն եք կամ սանը: 1992-ին, որը, ինչպես դուք եք գրում, Ղարաբաղի համար 1915 թվականն էր, Երեւանում հավաքվել էին իրենց բնօրանից դուրս քշված հաթերքցիները: Սրտառուչ արտասվալից խոսքով նրանց դիմեց Մակիչ Մակյանը: Ծերունազարդ ուսուցչի խոսքը ես ձայնագրեցի:

-Վաթսուն տարի ես իմ սաներին դաստիարակել եմ այնպես- ասաց Մակյանը- որ նրանք ուր էլ լինեն, համախմբվեն, վերադառնան եւ հարազատ գյուղը խլեն օտարի ձեռքից:

Մակիչ Մակյանը չտեսավ Հաթերքի ազատագրումը, բայց նրա պատգամը կատարված է, գյուղում եռում է կյանքը: Այստեղ պակասում են միայն «տաք երկրներ» չվածները:

ՄԱՎՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ